

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԿՈՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Տալվորիկցիներ, հյուրեր, ավագանու անդամներ : Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքը հաստատել է իր 2017 թվականի բյուջեն հետևյալ համամասնությամբ:

1. Եկամուտների գծով 16305,0 հազար դրամ.
2. Ծախսերի գծով 18460,0 հազար դրամ.
3. Բյուջեի դեֆիցիտ 2155,0 հազար դրամ.

Համայնքի համայնքապետարանը Տեղական Ինքնակառավարման մասին օրենքի 32-45 հոդվածների համաձայն, 2017 թվականի Հունվարի 1-ից մինչև Դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները՝ Տալվորիկ համայնքի ավագանին հրավիրել է 6 հերթական և 13 արտահերթ նիստեր:

Արմավիրի մարզի Տալվորիկ համայնքի բնակիչների կողմից ստացվել է 19 դիմում, որոնց ժամանակին տրվել է համապատասխան պատասխաններ:

Մտից գրությունների պատասխանները ժամանակին ուղղարկվել է համապատասխան մարմիններին:

2017 համայնքում մշակվել է շուրջ 1177 հա հողատարածք, որը ըստ կուլտուրաների կազմում է՝

1. Հացահատիկ – 36.5 հա-ից հավաքվել է 1110g բերք
2. Եգիպտացորեն –64.0 հա-ից հավաքվել է 2560g
3. Տեխնիկական մշակաբույսեր 69.0 հավաքագրվել է 1206 g.
4. Բոստանային մշակաբույս– 117.0 հա -ից հավաքվել է 30630g
5. Բազմամյա խոտ –177.5 հա-ից հավաքվել է 17741g
6. պտուղ – 303.7 հա-ից հավաքվել է 9475g
7. խաղող –270.6 հա-ից հավաքվել է 25800g
8. Բանջարանոցային մշակաբույս -139 հա-ից հավաքվել է 44560g

Տնկվել է 16.0 հա պտղատու և 0.6 հա խաղողի այգի:

1. Գույքահարկի գծով տարեկան պլանը կատարվել է 106.2%-ով. պլանավորված 600,0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 639.9 հազ. դրամ գումար:
2. Հողի հարկի գծով պլանը կատարվել է 98,5 %-ով. 10905.0 հազ. դրամի փոխարեն հավաքագրվել է 10723.0 հազ. դրամ գումար:
3. Վարձակալական հողի գծով վճարումները կազմել են 261.0 հազ. դրամ գումար, 400.0 հազ. դրամ գումարի փոխարեն, որը կազմում է տարեկան պլանի 65.3%-ը:
4. Համայնքի բնակիչներին հատկացվել է 50,0 հազ. դրամի սոց. օգնություն:
5. Համայնքի ֆոնդային բյուջեից 281.0 հազ. դրամ է հատկացվել դպրոցի խմելաջրի անցկացման համար:
6. Համայնքի թիվ 1 խորքային հորի պոմպի և շարժիչի վերանորոգման համար ֆոնդային բյուջեից հատկացվել է 853,0 հազ. դրամ և նոր խողովակների ձեռք բերման համար 400,0 հազ. դրամ:

7. Համայնքի բնակիչների երեխաների համար խաղահրապարակ կառուցելու համար գյուղապետարանի ֆոնդային բյուջեից հատկացվել 446,7 հազ.դրամ:

8. Հողերի քարտեզագրման և գեոդեզավորման համար հատկացվել է 250,0 հազ.դրամ:

9. Հակակարկտային կայանների համար բյուջեից հատկացվել է 100,0 հազ.դրամ:

10. Տեխնիկայի գնահատման համար բյուջեից հատկացվել է 200,0 հազ.դրամ:

Եկամտահարկի և էլեկտրաէներգիայի գծով պարտքեր չկան: Առ 12.01.2018թ-ի դրությամբ ընթացիկ տարվա աշխատավարձերի պարտքեր չունենք:

Համայնքի առաջնային հիմնախնդիրներից են .`

1. Համայնքի թիվ 1 խորքային հորի հաճախակի խափանումը
2. Ոռոգման ջրի ներքին ցանցի վատ վիճակը
3. Ճանապարհների վատ վիճակը
4. Հասարակական տրանսպորտի բացակայությունը:

Տալվորիկ համայնքի ղեկավարի աշխատակազմի ոչ մի աշխատակից չի ենթարկվել կարգապահական տույժի:

Տալվորիկ համայնքի ավագանին մշտական կապի մեջ է համայնքի համայնքապետարանի աշխատակազմի հետ:

Համայնքն ամենօրյա կապ է հաստատում մարզպետարանի, մարզային կառույցների, ՆԳ, դատական ու դատախազական մարմինների կառույցների հետ:

Տալվորիկ համայնքի ղեկավար`

Կ.Սաղաթեյան